ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ

Առողջության համապարփակ ապահովագրության շրջանակներում արգանդի վզիկի քաղցկեղի սքրինինգային հետազոտության իրականացման ենթաօրենսդրական փաստաթղթի մշակում

ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ առողջապահության նախարարությունը նախաձեռնել է առողջության համապարփակ ապահովագրության (ԱՀԱ) համակարգի ներդրման գործընթաց: 2023 թվականին ընդունվել է ԱՀԱ ներդրման հայեցակարգը: Առողջության համապարփակ ապահովագրության ներդրումը ներառված է նաև Կառավարության 2021-2026 թթ-երի ծրագրում, ինչպես նաև Առողջապահության նախարարության 2023-2026 թթ-երի ռազմավարական ծրագրում: Ռազմավարական ծրագրերի միջոցառումներով նախատեսվում է, որ ԱՀԱ կներդրվի փուլային՝ սկսած 2024թ-ից երկրորդ կիսամյակից, որին պետք է նախորդի ապահովագրության շրջանակներում տրամադրվելիք հիմնական և նվազագույն ծառայությունների փաթեթների մշակումը, ներառյալ հիվանդությունների կանխարգելման և վաղ շրջանում հայտնաբերման նպատակով իրականացվող պարտադիր սքրինինգային հետազոտություններ:

ԱՀԱ մասին օրենքի նախագծով նախատեսվում է, որ Առողջապահության նախարարությունը պետք է սահմանի վերոնշյալ պարտադիր բժշկական կանխարգելիչ զննության՝ այդ թվում նաև արգանդի վզիկի քաղցկեղի սքրինինգային հետազոտության իրականացման կարգը, պայմանները:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ

Փորձագետի աշխատանքի հիմնական նպատակը պարտադիր բժշկական կանխարգելիչ զննության ցանկում ընդգրկված օնկոսքրինինգների՝ տվյալ դեպքում արգանդի վզիկի քաղցկեղի իրականացման կարգի և պայմանների վերաբերյալ փաստաթղթի մշակումն է, ներառյալ

1. Ծրագրի իրականացման միջոցառումների ցանկի կազմում
2. Տվյալների հավաքագրում՝ արգանդի վզիկի քաղցկեղի սքրինինգային հետազոտության վերաբերյալ ազգային փաստացի և միջազգային թեմատիկ

հետազոտությունների տվյալների հավաքագրում և համեմատում, այդ թվում ԱՀԿ կողմից ռեկոմենդացիաների դիտարկում և այլ հաջողած սքրինինգային ծրագրերով երկրների փորձի կիրառում:

3. Սքրինինգային ծառայության իրականացման մոդելի ստեղծում՝ սքրինինգի իրականացման սխեմայի մշակման և անձի, բժշկական անձնակազմի ներկայացուցչի, ծառայություններ մատուցող կազմակերպության կողմից իրականացվող անհրաժեշտ և պարտադիր քայլերի հաջորդականության նկարագրում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

1. Արգանդի վզիկի քաղցկեղի սքրինինգային հետազոտությունների տվյալների վերլուծության արդյունքների հիման վրա նախատեսվող սքրինինգի եղանակի ընտրության տվյալների տրամադրում:
2. Սքրինինգային ծառայությունների իրականացման մոդելի ներկայացում համապատասխան հիմնավորումներով և սքրինինգների իրականացման յուրաքանչյուր փուլում նախատեսվող գործառույթների նկարագրությամբ:
3. Ծառայությունների իրականացման հնարավորությունների/կարողությունների համալրման և բժշկական ապրանքների և տեխնոլոգիաների ընտրության առաջարկների ներկայացում:
4. Սքրինինգների իրականացման կարգը նկարագրող փաստաթղթում արգանդի վզիկի քաղցկեղի հայտնաբերման հետազոտության կազմակերպման, իրականացման գործընթացները և արդյունքները բնութագրող ցուցանիշների,դրանց հաշվառման մոտեցումների հատվածի նկարագրի ներկայացում:

Բացի վերը նշված աշխատանքներից, փորձագետը, ըստ անհրաժեշտության, առողջապահության ֆինանսավորման խորհրդատուի/թիմի ղեկավարի կողմից կարող է ներգրավվել ԱՀԱ ներդրման ապահովմանն ուղղված միջոցառումներին վերաբերող խորհրդակցությունների, հանդիպումների, քննարկումների

ընթացքում իր աշխատանքի նկարագրով սահմանված աշխատանքների ներկայացման և այլ նպատակով:

Փորձագետը նաև պետք է մասնակցի սույն աշխատանքի նկարագրով պայմանավորված պրեզենտացիա/ների կազմմանը, նկարագրելով առաջ քաշված մոտեցումները և տրված լուծումները:

ՓՈՐՁԱԳԵՏԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Փորձագետին ներկայացվող պահանջներն են.

- Բարձրագույն բժշկական կրթություն՝ նեղ մասնագիտցմամբ վերոնշյալ մասնագիտական ոլորտում ՝ գինեկոլոգիա և/կամ ուռուցքաբանություն, աշխատանքային ավելի քան 10 տարվա փորձառությամբ, հայերենի գերազանց իմացություն, ռուսերենի և անգլերենի լավ իմացություն, համակարգչային գիտելիքներ մայքրոսոֆթ օֆիսից, ինտերնետ բրոուզերներից, օնլայն հարթակներից օգտվելու և դրանց հետ աշխատելու կարողություններ, թիմում աշխատելու և ըստ անհրաժեշտության ծանրաբեռնված աշխատելու պատրաստակամություն:
- Սքրինինգային հետազոտությունների, մասնավորապես արգանդի վզիկի քաղցկեղի սքրինինգային հետազոտության ուսումնասիրություններին կամ հետազոտություններին մասնակցություն կամ այդ աշխատանքների առաջնորդման փորձառություն:
- Սքրինինգային հետազոտությունների, մասնավորապես արգանդի վզիկի քաղցկեղի սքրինինգային հետազոտության միջազգային փորձի տիրապետում, թրեյնինգների և դասընթացների մասնակցություն: